ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 16.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/89

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.12.2017թ. թիվ 26-3/23342-17 գրությամբ Ա/Ձ Արման Ասմանգուլյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 12.12.2017թ. թիվ 01/61-27540 գրության հիման վրա, 14.12.2017թ. թիվ 26-3/23342-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է Ա/Ձ Արման Ասմանգուլյանին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Արման Ասմանգուլյանին ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Արման Ասմանգուլյանը Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով մասնակցության հայտ են ներկայացրել Ա/Ձ Արման Ասմանգուլյանը և «Բեկոր Հրատ» ՍՊԸ-ն:

Այնուհետև, 29.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Արման Ասմանգուլյանը, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.12.2017թ. Ա/Ձ Արման Ասմանգուլյանին ծանուցել է, որ վերջինս ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տեղեկացրել է Ա/Ձ Արման Ասմանգուլյանին, որ ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն (նախկինում կատարված պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունները թերի են):

Ղեկավարավելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետով՝ առաջարկել է ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը կմերժվի, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խնդրել է օրենքով սահմանված ժամկետում ներկայացնել վերը նշված փաստաթղթերը Երևանի քաղաքապետարան:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը (որակավորման փաստաթղթեր): Սակայն ներկայացված փաստաթղթերում բացակայում էին հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հաստատման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Գնահատող հանձնաժողովը 06.12.2017թ. կայացրած որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով մինչև 07.12.2017թ. ներառյալ շտկել անհամապատասխանությունը, մասնավորապես ներկայացնել հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հաստատման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ա/Ձ Արման Ասմանգուլյանը կատարելով գնման գործընթացում իր ստանձնած պարտավորությունը սահմանված ժամկետում, այն է՝ 07.12.2017թ. ներկայացրել է որակավորման փաստաթղթերը: Մասնավորապես, ներկայացրել է հաշիվ-ապրանքագրերի պատճենը, պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի՝ հանձնման-ընդունման արձանագրության պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հաստատման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ փաստաթղթերից մեկը՝ հանձնման-ընդունման արձանագրությունը, չի վերաբերում ներկայացված պայմանագրին:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը 08.12.2017թ. կայացրած որոշմամբ Մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին դադարեցվել է:

Մասնակիցը նշել է, որ 06.12.2017թ. Ա/Ձ Արման Ասմանգուլյանը էլեկտրոնային հասցեին ստացված ծանուցումից հետո Երևանի քաղաքապետարանի vachagan.mejunc@yerevan.am էլեկտրոնային հասցեին է ուղարկել գնահատող

հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները, սակայն ինչպես հետագայում պարզվել է Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էր վրիպակ, այն է՝ փաստաթղթերից մեկի հանձնման-ընդունման արձանագրությունը չէր վերաբերում ներկայացված պայմանագրին: Սխալմամբ կցվել է ոչ թե Հայաստանի ազգային հիմնադրամի և Ա/Ձ Արման Ասմանգուլյանի միջև կնքված «ՀՁՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1-2» ծածկագրով պայմանագրի հանձնման-ընդունման թիվ 2 արձանագրությունը (հանձնման-ընդունման թիվ 1 արձանագրությունը կցվել է), այլ ՀՀ Նախագահի աշխատակազմի և Ա/Ձ Արման Ասմանգուլյանի միջև կնքված «ՀՀՆԱ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/7-3» պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունը:

Այնուհետև պարզելով, որ Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից գնահատող հանձնաժողովին ներկայացված արձանագրություններից մեկը չի վերաբերում ներկայացված պայմանագրին, այլ վերաբերում է այլ պատվիրատուի հետ կնքված պայմանագրին, Ա/Ձ Արման Ասմանգուլյանը անմիջապես կապ է հաստատել պատվիրատուի հետ՝ հայտնելով, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ և նամակին կցված ֆայլերից մեկը սխալմամբ է կցվել: Ա/Ձ Արման Ասմանգուլյանը խնդրել է թույլ տալ ներկայացնելու ճիշտ արձանագրությունը, սակայն պատվիրատուն հայտնել է, որ փաստաթղթեր ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրացել է և Ա/Ձ Արման Ասմանգուլյանը այլևս իրավունք չունի ներկայացնելու որևէ փաստաթուղթ:

Ա/Ձ Արման Ասմանգուլյանը խնդրել է Խորհրդին հաշվի առնել, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, իրականում առկա են ներկայացված պայմանագրի բոլոր հանձնման-ընդունման արձանագրությունները և Ա/Ձ Արման Ասմանգուլյանը ներկայացրել է պահանջված փաստաթղթերը և ունի նշված ընթացակարգով պահանջվող մասնագիտական փորձառությունը:

Ա/Ձ Արման Ասմանգուլյանը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.12.2017թ. ժամը 11:00-ի և 22.12.2017թ. ժամը 11:00-ի նիստերի վերաբերյալ, 22.12.2017թ. ժամը 11:00-ի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.12.2017թ. թիվ 01/61-27540 գրությամբ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2017թ. որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Արման Ամանգուլյանը:

Պատվիրատուն ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթով, առաջարկել է Մասնակցին սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Վերջինս ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, սակայն ներկայացված փաստաթղթերում բացակայում էին հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրության և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հաստատման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի 06.12.2017թ. կայացրած որոշմամբ մեկ աշխատանքային օրով կասեցվել է նիստը՝ առաջարկվելով մինչև 07.12.2017թ. ներառյալ շտկել անհամապատասխանությունը, սակայն ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ներկայացված փաստաթղթերից մեկը՝ հանձնման-ընդունման արձանագրությունը, չի վերաբերում ներկայացված պայմանագրին:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը 08.12.2017թ. կայացրած որոշմամբ Մասնակցի հետագա մասնակցությունը գնման գործընթացին դադարեցրել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.12.2017թ. ժամը 11:00-ի և 22.12.2017թ. ժամը 11:00-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2017/89 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/89 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արման Ասմանգուլյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արման Ասմանգուլյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 06.12.2017թ. որոշմամբ արձանագրել է Ա/Ձ Արման Ասմանգուլյանի որակավորման փաստաթղթերում անհամապատասխանություններ: Մասնավորապես, Մասնակցի կողմից որպես որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացվել է միայն համապատասխան պայմանագրի պատճեն: Գնահատող հանձնաժողովն առաջարկել է մինչև 07.12.2017թ. շտկել արձանագրված անհամապատասխանությունները և ներկայացնել տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը: Սահմանված ժամկետում Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից կատարվել է համապատասխան շտկումը և ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը: Սակայն ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ներկայացված փաստաթղթերից մեկը՝ հանձնման-ընդունման արձանագրությունը չի վերաբերում ներկայացված պայմանագրին: Ելնելով վերոգրյալից՝ գնահատող

հանձնաժողովը որոշել է Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա Ա/Ձ Արման Ասմանգուլյանի հայտը մերժել:

4. Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից Խորհրդին ներկայացվել է Հայաստանի զարգացման հիմնադրամի և Ա/Ձ Արման Ասմանգուլյանի միջև 15.04.2015թ. կնքված «ՀԶՀ-ՇՀԱՇՁԲ-11/3-15/1-2» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 22.04.2015թ. կազմված՝ պայմանագիրը ամբողջությամբ սահմանված ժամկետում կատարելը հավաստող թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրությունը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.12.2017թ. թիվ 26-3/23342-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 12.12.2017թ. թիվ 01/61-27540 գրությունը և կից փաստաթղթերը, Ա/Ձ Արման Ասմանգուլյանի գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

<< կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ

կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Արման Ասմանգուլյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Արման Ասմանգուլյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.12.2017թ. ծանուցել է Մասնակցին, հայտնելով, որ վերջինիս կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն (նախկինում կատարված պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունները թերի են):

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ Մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 06.12.2017թ.

որոշմամբ արձանագրել է Ա/Ձ Արման Ասմանգուլյանի որակավորման փաստաթղթերում անհամապատասխանություններ: Մասնավորապես, Մասնակցի կողմից որպես որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ներկայացվել է միայն համապատասխան պայմանագրի պատճենը: Գնահատող հանձնաժողովը առաջարկել է մինչև 07.12.2017թ. շտկել արձանագրված անհամապատասխանությունները և ներկայացնել տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը: Սահմանված ժամկետում Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից կատարվել է համապատասխան շտկումը և ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը: Սակայն ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ փաստաթղթերից մեկը՝ հանձնման-ընդունման արձանագրությունը չի վերաբերում ներկայացված պայմանագրին: Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշել է Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա Ա/Ձ Արման Ասմանգուլյանի հայտը մերժել:

Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ա/Ձ Արման Ասմանգուլյանը որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է Ա/Ձ Արման Ասմանգուլյանի և Հայաստանի զարգացման հիմնադրամի

միջև 15.04.2015թ. կնքված թիվ «ՀՋՀ-ԾՀԱԾՁԲ-11/3-15/1-2» ծածկագրով տպագրական աշխատանքների գնման պայմանագիրը:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 06.12.2017թ. արձանագրվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն և Մասնակցին ծանուցվել է այն մասին, որ նախկինում կատարված պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունները թերի են:

Մասնակիցը սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացրել է արձանագրված անհամապատասխանությունների շտկումները, սակայն որպես նախկինում կատարված պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրություն ներկայացրել է այլ պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրությունը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է ոչ համապատասխան և Մասնակցի հայտը մերժվել է:

Միևնույն ժամանակ խորհուրդն արձանագրում է որ Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից խորհրդի նիստի ժամանակ ներկայացվել է Հայաստանի զարգացման հիմնադրամի և Ա/Ձ Արման Ասմանգուլյանի միջև 15.04.2015թ. կնքված «ՀՋՀ-ԾՀԱԾՁԲ-11/3-15/1-2» ծածկագրով պայմանագրի ամբողջությամբ սահմանված ժամկետում կատարված լինելը հավաստող Ա/Ձ Արման Ասմանգուլյանի և Հայաստանի զարգացման հիմնադրամի միջև 22.04.2015թ. կնքված թիվ 1 հանձնման-ընդունման արձանագրությունը:

Այսպես՝ Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Խորհուրդն արձանագրում է, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցվելուց հետո մեկ աշխատանքային օրյա ժամկետում Ա/Ձ Արման Ասմանգուլյանը

շտկումները, դրանով իսկ կատարելով անհամապատասխանությունը շտկելու իր պարտականությունը: Միևնույն ժամանակ Մասնակիցը հայտնել է, որ տեխնիկական պատճառներով սխալմամբ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է այլ պայմանագրի հանձնման-ընդունման արձանագրություն և հետագայում Մասնակիցը փորձել է ճիշտ արձանագրությունը տրամադրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին: Դրա հետ մեկտեղ Մասնակիցը Խորհրդին է ներկայացրել Հայաստանի զարգացման հիմնադրամի և Ա/Ձ Արման Ասմանգուլյանի միջև 15.04.2015թ. կնքված և որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված «ՀՋՀ-ԾՀԱԾՁԲ-11/3-15/1-2» ծածկագրով պայմանագրի պատշաճ կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման ճիշտ արձանագրության օրինակը:

Այսպիսով, ուսումնասիրելով Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից «ԵՔ-ԳՀԱԾՁԲ-18/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում դրսևորած վարքագիծը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրականում առկա է Ա/Ձ Արման Ասմանգուլյանի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված «ՀՋՀ-ԾՀԱԾՁԲ-11/3-15/1-2» ծածկագրով պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող ճիշտ հանձնման-ընդունման արձանագրությունը, Խորհուրդը գտնում է, որ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.12.2017թ. թիվ 26-3/23342-17 գրությամբ Ա/Ձ Արման Ասմանգուլյանին (ՀՎՀՀ՝ 30923517) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**